Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 4th September 2022 Bulletin 38/2022

Third Sunday after the Assumption
(Eve of the Fast of the Exaltation of the Holy Cross)

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 7:4-16

Մեծ է խօսքի համարձակութիւնս ձեզի հանդէպ, մեծ է ձեզմով պարծանքս, լեցուած եմ մխիթարութեամբ, չափազանց ուրախ եմ մեր ամբողջ տառապանքին մէջ:

Որովհետեւ՝ երբ մենք Մակեդոնիա հասանք՝ մեր մարմինը բնա՛ւ անդորրութիւն չունեցաւ, այլ ամէն կողմէ կը տառապէինք. դուրսէն կռիւներ կային, իսկ ներսէն՝ վախեր: Բայց Աստուած, որ խոնարհները կը մխիթարէ, մեզ մխիթարեց Տիտոսի գալուստով: Եւ ո՛չ միայն անոր գալուստով, այլ նաեւ այն մխիթարութեամբ՝ որով ինք մխիթարուած էր ձեզմով, երբ պատմեց մեզի ձեր տենչանքը, ձեր կոծը, ինծի հանդէպ ձեր ունեցած նախանձախնդրութիւնը, այնպէս որ ա՛լ աւելի ուրախացայ: Որովհետեւ, թէպէտ տրտմեցուցի ձեզ այդ նամակով, չեմ զղջար, (թէպէտ զղջացեր էի,) քանի որ կը նշմարեմ թէ այդ նամակը տրտմեցուց ձեզ, թէպէտ միայն ժամանակ մը: Ուրեմն կ'ուրախանամ, ո՛չ թէ քանի որ տրտմեցաք, հապա՝ որովհետեւ տրտմեցաք ապաշխարութեա՛ն համար. քանի որ տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, որպէսզի ոչինչ կորսնցուցած ըլլաք մեր միջոցով:

Արդարեւ Աստուծոյ ուզած տրտմութիւնը կը պատճառէ՝ ապաշխարութիւն՝ փրկութեան համար, որ չի զղջացներ. բայց աշխարհի տրտմութիւնը կը պատճառէ մահ: Քանի դուք տրտմեցաք Աստուծոյ ուզած կերպով, ահա՛ այդ բանը ձեր մէջ ի՛նչ փութաջանութիւն գոյացուց, նոյնիսկ ջատագովութիւն, ընդվզում, վախ, տենչանք, նախանձախնդրութիւն, վրէժխնդրութիւն. ամէն կերպով դուք ձեզի հաւանութիւն տուիք թէ այդ խնդիրին մէջ անկեղծ էք: Ուրեմն ինչ որ գրեցի ձեզի, ո՛չ թէ անիրաւութիւնը ընողին պատճառով էր, եւ ո՛չ ալ անիրաւութիւնը կրողին պատճառով, հապա՝ որպէսզի երեւնայ ձեզի Աստուծոյ առջեւ մեր ունեցած փութաջանութիւնը ձեզի հանդէպ: Ուստի ձեր մխիթարութեամբ մե՛նք մխիթարուեցանք. եւ ա՛լ աւելի ուրախացանք Տիտոսի ուրախութեան համար, որովհետեւ անոր հոգին հանգստացած էր բոլորէդ. քանի որ ամօթահար չեմ ըլլար՝ ձեզմով որեւէ բանի մէջ պարծենալուս համար անոր առջեւ. հապա, ինչպէս ամէն բան ճշմարտութեամբ խօսեցանք ձեզի, նոյնպէս Տիտոսի առջեւ մեր պարծանքն ալ ճշմարիտ գտնուեցաւ: Նաեւ իր գորովը աւելի առատ է ձեզի հանդէպ, մինչ կը վերյիշէ ձեր բոլորին հնազանդութիւնը, թէ ի՛նչպէս ահով ու դողով ընդունեցիք զինք: Ուստի կ'ուրախանամ որ ամէն բանի մէջ վստահութիւն ունիմ ձեր վրայ:

The Epistle of St Paul to the 2 Corinthians 7:4-16;

I have spoken to you with great frankness; I take great pride in you. I am greatly encouraged; in all our troubles my joy knows no bounds. For when we came into Macedonia, we had no rest, but we were harassed at every turn conflicts on the outside, fears within. But God, who

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

comforts the downcast, comforted us by the coming of Titus, and not only by his coming but also by the comfort you had given him. He told us about your longing for me, your deep sorrow, your ardent concern for me, so that my joy was greater than ever.

Even if I caused you sorrow by my letter, I do not regret it. Though I did regret it—I see that my letter hurt you, but only for a little while— yet now I am happy, not because you were made sorry, but because your sorrow led you to repentance. For you became sorrowful as God intended and so were not harmed in any way by us. Godly sorrow brings repentance that leads to salvation and leaves no regret, but worldly sorrow brings death. See what this godly sorrow has produced in you: what earnestness, what eagerness to clear yourselves, what indignation, what alarm, what longing, what concern, what readiness to see justice done. At every point you have proved yourselves to be innocent in this matter. So even though I wrote to you, it was neither on account of the one who did the wrong nor on account of the injured party, but rather that before God you could see for yourselves how devoted to us you are. By all this we are encouraged.

In addition to our own encouragement, we were especially delighted to see how happy Titus was, because his spirit has been refreshed by all of you. I had boasted to him about you, and you have not embarrassed me. But just as everything we said to you was true, so our boasting about you to Titus has proved to be true as well. And his affection for you is all the greater when he remembers that you were all obedient, receiving him with fear and trembling. I am glad I can have complete confidence in you.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 7:31-37

Դարձեալ Տիւրոսի եւ Սիդոնի հողամասերէն մեկնելով՝ գնաց Գալիլեայի ծովեզերքը, Դեկապոլիսի հողամասին մէջէն: Մէկը բերին անոր առջեւ, խուլ ու դժուարախօս, եւ կ՚աղաչէին՝ որ ձեռք դնէ անոր վրայ:

Բազմութենէն մէկդի առնելով զայն՝ իր մատները մխեց անոր ականջներուն մէջ ու թքնեց, եւ դպաւ անոր լեզուին. ապա երկինք նայելով՝ հառաչեց ու ըսաւ անոր. «Եփփաթա՛», (որ ըսել է՝ բացուէ՛.) իսկոյն բացուեցան անոր ականջները եւ քակուեցաւ անոր լեզուին կապը, ու շիտակ կը խօսէր:

Պատուիրեց անոնց՝ որ ո՛չ մէկուն ըսեն. սակայն ինք ո՛րքան կը պատուիրէր անոնց, անոնք ա՛լ աւելի կը հրապարակէին: Չափազանց կ՚ապշէին ու կ՚ըսէին. «Ան ամէն ինչ լաւ կ՚ընէ. խուլերուն լսել կու տայ, եւ համրերուն՝ խօսիլ»:

Jesus Healing

The Holy Gospel of Jesus Christ according to Mark 7:31-37

Jesus Heals a Deaf and Mute Man

Then Jesus left the vicinity of Tyre and went through Sidon, down to the Sea of Galilee and into the region of the Decapolis. ***h*** There some people brought to him a man who was deaf and could hardly talk, and they begged Jesus to place his hand on him.

After he took him aside, away from the crowd, Jesus put his fingers into the man's ears. Then he spit and touched the man's tongue. He looked up to heaven and with a deep sigh said to him, *"Ephphatha!"* (which means "Be opened!"). At this, the man's ears were opened, his tongue was loosened and he began to speak plainly.

Jesus commanded them not to tell anyone. But the more he did so, the more they kept talking about it. People were overwhelmed with amazement. "He has done everything well," they said. "He even makes the deaf hear and the mute speak."



ՆԻԿԻԱՅԻ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 318 ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Քրիստոսի Եկեղեցու պատմության մեջ առաջին Տիեզերական ժողովը տեղի է ունեցել 325 թվականին, Կոստանդիանոս Մեծ կայսեր հրամանով, Կ. Պոլսի մոտ գտնվող Նիկիա քաղաքում: Ժողովին մասնակցում էին Ընդհանրական Եկեղեցու 318 նշանավոր հայրապետներ: Տիեզերաժողովի գումարման շարժառիթն Ալեքսանդրիայի Արիոս անունով երեցն էր, ով քարոզում էր, թե Քրիստոս անսկիզբ չէ, այլ ստեղծվել է ժամանակներից ու դարերից առաջ Հայր Աստծո ցանկությամբ, որպեսզի նրա միջոցով կատարվի արարչագործությունը: «Միակ անծնունդը, միակ հավիտենականը, միակ անսկիզբը Հայր Աստված է: Որդին առաջացել է ոչ թե Հոր էությունից, այլ ոչնչից: Կար ժամանակ, երբ Որդին չկար: Որդին թեև ստացել է Հայր Աստծո ողջ շնորհքը և որդեգրվել, սակայն անապական չէ, ինչպես Հայրը, այլ այլայլելի, ինչպես արարածները», - Արիոսի այս դատողությունների պատճառով փաստորեն մերժվում էր Քրիստոսի Աստվածությունը՝ վտանգի տակ դնելով ողջ քրիստոնեական վարդապետությունը: Արիոսականությանը դեմ է դուրս գալիս Ալեքսանդրիայի Ալեքսանդր արքեպիսկոպոսը: Նա իր քարոզներում շեշտում էր, որ հավիտենական է Աստված, հավիտենական է և Որդին, Հայրը և Որդին միաժամանակ գոյություն ունեն: Հայրը Որդուն չի նախորդում ոչ մի վայրկյան, միշտ եղել է Հայրը, միշտ եղել է Որդին:

Այս Տիեզերաժողովում դատապարտվում է Արիոսի մոլորությունը՝ հայտարարելով այն հերետիկոսություն: Նիկիայի Ա Տիեզերաժողովին մասնակցում էր նաև Ս. Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը: Ժողովի ընդունած դավանաբանական բանաձևը, որը հայտնի է Նիկիական հանգանակ անունով, Ս. Արիստակես Հայրապետը Հայաստան է բերել, ներկայացրել հորը՝ Ս Գրիգոր Լուսավորչին: Վերջինս էլ դրան ավելացրել է «Իսկ մեք փառաւորեսցուք... » հատվածը:

Նիկիայում ընդունված Հավատո հանգանակն ու Լուսավորչի ավելացրած հատվածը մինչև այսօր էլ անփոփոխ օգտագործում են Հայ Եկեղեցու ծիսակարգում: Արիստակեսն իր հետ Հայաստան էր բերել նաև Նիկիայի ժողովում ընդունած 20 կանոնները, որոնք նույնպես հաստատվել են Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից:

Commemoration of 318 Pontiffs participating in the Ecumenical Council of Nicaea

This council is the First Ecumenical Council in the history of the Church, which was convened upon the order of the King Costandianos the Great in the town Nicaea near Constantinople, in 327 A. D. 318 prominent pontiffs representing the Universal Church participated in the Council. The reason for convening the council was priest Arios of Alexandria, who preached that Christ was not without beginning, that he was created upon the Will of God before times and centuries, in order the creation of God to be realized by means of Christ. The only one not having birth, the only one eternal and without beginning is God the father. Son has been created not from the essence of the Father, but from nothing. There was a time when the Son did not exist. Although the Son has received all the virtues of the Father and is adopted, he is not pure as the Father is, he is changeable, as all human beings.

Because of such viewpoints of Arios the Divinity of Christ was denied and the entire Christian doctrine was endangered. Archbishop Alexander of Alexandria opposed to Arianism. In his sermons he stressed that God is eternal, and Son is eternal, Father and Son are of the same time. Father does not precede the Son even for a moment, Father has always existed and Son has always existed. The false teaching of Arios is condemned during the first Ecumenical Council and it is declared to be heresy.

Aristakes, son of St. Gregory the Illuminator, also participates in the first Ecumenical Council. The doctrinal formulation adopted by the Council, which is known as Nicene Creed, is brought to Armenia by Aristakes and is presented to St. Gregory the Illuminator. The latter added to it the following passage: “As for us, we shall glorify him who was before the ages, worshipping the Holy Trinity and the one Godhead, the Father and the Son and the Holy Spirit, now and always and unto ages of ages. Amen.”.

The Nicene Creed, adopted in Nicaea, and the passage added by St. Gregory the Illuminator, are up to date used in the rites of the Armenian Apostolic Church without any change. Aristakes brings to Armenia also 20 canons adopted by the Council of Nicaea, which are also ratified by St. Gregory the Illuminator.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

«Շատ դուստրեր հարստութիւն ձեռք բերին, շատերն էլ սխրագործութիւններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց եւ անցար բոլորից» (Առակաց 31.29):

Սեպտեմբեր 8-ը բոլոր քրիստոնէական եկեղեցիները նշում են մեր Փրկչի մօր՝ Սուրբ Մարիամ Աստուածածնի ծննդեան օրը: Ներկայ եւ պատմական Հայաստանի տարածքում լինի, թէ ամբողջ աշխարհում, Սուրբ Աստուածածնի անունը կրող եկեղեցիները թերեւս ամենաշատն են իրենց թուով: Բոլոր քրիստոնեայ ազգերը իւրահատուկ խոնարհում ունեն Սուրբ Մարիամի նկատմամբ՝ իբրեւ Փրկիչ Աստծոյ մօր, Նուր Ուխտի տապանակի, Աստծուն իր մէջ կրած տաճարացած անձի եւ աղջիկների, կանանց եւ մայրերի օրինակի: Անգամ այլ կրօն դաւանողներ են խորը յարգանքով խօսում Սուրբ Կոյսի մասին: Քրիստոսին սիրողը չի կարող չը սիրել ու անտարբեր լինել Իր Մօր նկատմամբ, չը խոնարհուել նրա մաքրութեան առաջ:

Քրիստոնէական Սրբազան Աւանդութիւնը մեզ է փոխանցում Սուրբ Աստուածածնի ծննդեան պամութիւնը՝ իբրեւ երկար սպասուած զաւակ, որ ուխտաւորաբար խոստացուած էր Աստծոյ ծառայութեան: Վերափոխման տօնական օրերից յետոյ առաջին տօնը նուիրուած է Աստուածածնի ծնողներին՝ Սուրբ Յովակիմին եւ Աննային: Նրանք էին, որ երկար ժամանակ զաւակ չունենալով, խոստում արեցին, որ ծնուելիք զաւակը Աստծունը կը դառնայ եւ կը նուիրուի Տաճարին:

Այժմ էլ դարի խնդիրներից մէկն է ամուսնացեալ զոյգերի անզաւակութիւնը: Շատերն են բժշկական եւ վերարտադրութեան նորարար (innovative) միջոցների դիմում: Սակայն դեռեւս Աստծուն հաւատարիմ կոզեակներ կան, որտեղ հաւատը հրաշք է ծնում՝ անզաւակներին իրենց երեխայով ուրախանալու շնորհը տալով: Հայաստանում բազմաթիւ սրբավայրեր կան, որոնց ուխտի եկածները աներկբայ հաւատով վկայում են Աստծով զաւակ ունենալու գեղեցիկ փորձառութիւնը:

Սուրբ Մարիամը հաւատի ծնունդ է, հաւատով Աստծուն նուիրուած, Տաճարում հաւատով կրթուած, եւ հաւատով Աստուածորդու Մայր լինելու արժանացած սրբուհին է, հաւատով ապրելու իդէալը իւրաքանչիւր հաւատացեալի համար:

Հռոմէական կամ Լատին եկեղեցին, Սուրբ Կոյսի նկատմամբ իր յարգանքի եւ մեծարումի մէջ չափից աւելի առաջանալով, գրեթէ աստուածութեան պաշտամունքին հաւասար դարձրեց Աստուածածնի անձը: Բողոքականներն էլ, ի հակադրութիւն Լատին եկեղեցու, Աստուածամօր յանդէպ իրենց վերաբերմունքի մէջ այլ ծայրայեղութեան գնացին՝ յամեմատելով անգամ հաւկիթի հետ, որ ճուտի ծնուելուց յետոյ անպիտան է դառնում, չը նշելով նրան նուիրուած ոչ մի տօն եւ կոչելով անգամ «մեր քոյրը»:

Ինչո՞ւ ենք մենք՝ առաքելական, ուղղափառ դաւանութեան քրիստոնեաներս պատուում եւ մեծարում Սուրբ Կոյսին, նուիրում տօներ եւ գեղեցիկ շարականներ՝ գովերգելով նրա անձն ու կոչումը: Բազմաթիւ վկայութիւններ կան Սուրբ Գրքից, որ հիմք են դարձել քրիստոնէական եկեղեցու համար Սուրբ Կոյսին նման մեծարանքով վերաբերուելուն. Գաբրէլ հրեշտակի հետ մենք էլ ենք ասում. «Ուրախացի՛ր, բերկրեա՛լ, Տէրը քեզ հետ է: Օրհնեալ ես դու կանանց մէջ»: Ամէն օր երգուող «Սուրբ Աստուած» երգի աւարտին առանձին միշտ դիմում ենք Աստուածամօրը՝ ասելով. «Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ Սուրբ Կոյս Աստուածածին Մարիամ, Մայր Քրիստոսի, մատուցի՛ր մեր աղաչանքները Քո Որդուն եւ մեր Աստծուն՝ փրկելու մեզ փորձութիւնից եւ բոլոր վտանգներից»:

Սուրբ Յովհաննէս Մկրտչի մայր Եղիսաբեթը եւս, Սուրբ Հոգուց ներշնչուած, գովերգում է նրան՝ ասելով. «Օրհնեա՛լ ես դու կանանց մէջ, եւ օրհնեա՛լ է քո որովայնի պտուղը»: Նա վկայում է Աստուածածնի մասին՝ ասելով. «Երբ քո ողջոյնի ձայնը հասաւ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում» (Ղուկ. 1:42-44):

Սուրբ Մարիամն իսկ Սուրբ Հոգով հրաշալի օրհներգութիւն է ասում Տիրոջը, որ մենք եկեղեցում երգում ենք յայտնի «Մեծացուցէ անձն իմ զՏէր» սկսուածքով: Այս օրհներգութեան մէջ է նաեւ բոլոր սերունդներից գովերգուելու մարգարէութիւնը.

«Ահա, այսուհետեւ բոլոր սերունդները ինձ երանի կը տան, որովհետեւ ամենազօր Աստուած մեծամեծ գործեր արեց ինձ համար» (Ղուկ. 1:48-49):

Հին Կտակարանի մարգարէութիւններից եւս կարող ենք վկայութիւն ունենալ Սուրբ Կոյսի մասին՝ իբրեւ թագուհու, որ կապուած է վերը յիշուած մարգարէութեան հետ. «Շատ

դուստրեր հարստութիւն ձեռք բերին, շատերն էլ սխրագործութիւններ կատարեցին, բայց դու գերազանցեցիր նրանց եւ անցար բոլորից:
… Նա պատիւ է տալիս Աստծուց երկիւղ կրողներին, դուք էլ նրա շուրթերի պտղից պատի՛ւ տուէք նրան» (Առակաց 31:29;31):

Բազմաթիւ են հինկտակարանեան մարգարէութիւնները, ուր կանխայայտ կերպով Սուրբ Կոյսը մեծարւում է իբրեւ արքայադուստր եւ թագուհի:

«Թագուհին կանգնած է քո աջից՝ զարդարուած ու պաճուճուած ոսկեհուռ զգեստներով: Դո՛ւս տր, լսի՛ր ու տե՛ս, մօտեցրո՛ւ ականջը քո, մոռացի՛ր քո ժողովրդին եւ քո հօր տունը, քանզի թագաւորը ցանկացաւ քո գեղեցկութիւնը» (Սղմ. 44:10-11): Այս է պատճառը, որ շատ եկեղեցիների Աստուածամօր սրբապատկերներում Սուրբ Կոյսը պատկերուած է թագով: «Արքայադստեր ողջ փառքը իր մէջ է՝ ոսկեհուռ զգեստների զարդարանքի ու պաճուճանքի տակ» (Սղմ. 44:14):

Մենք էլ ամէնօրեայ ժամերգութեան եւ Սուրբ Պատարագի մէջ մշտապէս դիմում ենք Փրկչին այդքան սիրելի սրբուհի Մօր բարեխօսութեանը՝ Տիրոջից ողորմութեան արժանանալու համար: Այսօր մենք էլ երգենք Սուրբ Կոյսի ծննդեան օրուայ հրճուալից շարականը, որ մեզ է հասել XIII դարի մեր սուրբ հայրապետից եւ օրհներգենք Աստուածածնին՝ միանալով նրան գովերգող հրեշտակներին.

«Այսօր ցնծան երկնայինքն եւ պար առեալ ի բարձունս, Երգեն զերգս հոգեւորս յաւուր ծննդեան Սրբուհւոյն:

Այսօր վերինն Սիովն գոչեն զերգս սրովբէից Ձերեքսրբեանն ասելով յաւուր ծննդեան Սրբուհւոյն:

Այսօր աստեղք եւ լուսին ընդ արեւու հրճուելով Գովեն զլոյսն ի Հօրէ յաւուր ծննդեան Լուսոյ Մօրն»:

Թող Սրբուհի Մարիամ Աստուածածնի մայրական բարեխօսութեամբ եւ միջնորդութեամբ նորանոր հրաշքներով եւ աստուածային ողորմութիւններով լեցուի մեր կեանքը, որպէսզի գովերգենք ու փառաբանենք մեզ համար անհնարինը հնարաւոր դարձրած Աստծուն, Ում փառք բարձունքներում այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Today the heavens rejoice and dance on high.

They sing sacred songs on the day of the Holy Virgin's birth.

Today in the Upper Sion the songs of the seraphim resound saying, The three holies (Trisagion) on the day of the Holy Virgin's birth.

Today the stars and moon with the sun rejoice Praising the light from the Father on the day of the birth of the mother of Light. (Hakob I Klayetsi (1200 - 1286) XIII century)

This hymn was composed by the vartapet Hakob Klayetsi (13th c.), but it is sometimes attributed to St. Nerses Shnorhali. It is the Laudate from the Sing, Children of Sion canon, dedicated to the Birth of the Virgin Mary, in five verses. It is a brilliant example of a hymn in Mode IV.

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՊԱՀՈՑ

Բարեկենդանը պահքին նախորդող կիրակին է, որը նվիրված է տաղավար տոներից մեկին՝ Խաչվերացին և տևում է երկուշաբթիից մինչև շաբաթ:

EVE OF THE FAST OF EXALTATION OF THE HOLY CROSS

This is the Sunday preceding the week prior to the Exaltation of the life giving Cross of the Lord. Fasting period is from Monday to Friday.

Exaltation of the Holy Cross **Sunday 11th September 2022**

All those wishing to make monetary donations, on the occasion of Exaltation of the Holy Cross, please contact the Parish Council members at church or call parish office **020 7373 8133 .**

Thanking you in advance,
St Yeghiche Armenian Church Parish Council

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

food■give

The International Christian Food Bank

food■gives, is your opportunity to share your food with hungry believers around the world.

We live in a world of terrible hunger■

But some of us have food to spare■

"You can make a difference by donating dry food to Christians in need"

The Armenian Church Diocese in U.K. is joining the Barnabas Fund Project, in the food■gives initiative to help Christians in need by donating six types of dry food:

Wheat flour (wholemeal, not self-rising flour)
Rice,
Lentils, (dried)
Chick-peas, (dried)
Soap Bar,
Salt, (preferably bags, not tubs).

Please Join **St Yeghiche Armenian Church** in this drive by donating dried food (not tins) and ensure the items do not contain liquid, oil, or animal products.
We can receive bag sizes up to 3kg. alternatively you can make a financial contribution which will be used to buy the said items and donated to the cause.

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd
Account at: HSBC, Acc.no:42674432, Sortcode:40-02-26,
IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F ref: "food■gives"

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic contributions.

Thank you. Your Christian generosity is appreciated to all those in need.
St Yeghiche Armenian Church Parish Council

DAILY BIBLE READINGS FOR 2022 **According to the Lectionary of the Armenian Apostolic Church**

5 September	2 Corinthians 8:1-15; Mark 8:1-9
6 September	2 Corinthians 8:16-24; Mark 8:10-21
7 September	2 Corinthians 9:1-9; Mark 8:22-26
8 September	Birth of the Holy Virgin Mary Mother of God Proverbs 31:29-31; Isaiah 61:9; Galatians 3:24-29; Matthew 1:1-17
9 September	2 Corinthians 10:7-17; Mark 9:37-49
10 September	Navagadik Proverbs 3:9-17; Isaiah 66:12-16; 1 Timothy 3:14-16; John 10:22-42

Join St. Yeghiche Choir

For the joy of singing and celebrating the beautiful Armenian Divine Liturgy and coming together for shared experience

Join us in the celebration of the Divine Liturgy, Badarak, at. St. Yeghiche Church in Cranley Gardens. Deepen your faith and discover your talent as a choir member, learning the Armenian hymns and rituals.

No prior experience or knowledge is needed. The choir master Aris Nadirian will help you build your confidence and proficiency in singing the liturgy.

The St Yeghiche Armenian Church choir has evolved since 1976. Maestro Aris Naderian has been the choir director for the last 20 years. His predecessor was Dikran Vorperian. Beyond singing the Divine Lityrgy on Sundays at St. Yeghiche Church, the choir takes part in various episcopal services on various occasions at different churches around Britain, including the Westminster Abbey, Canterbury Cathedral, Surry Cathedral, Oxford and others.

Meet our Choir Master Aris Nadirian

Since 1989 Aris has been an active artist in the cultural and musical life of London Armenian community. As opera singer he has sung leading roles with various UK companies. He is the founder and artistic director of London Armenian Opera and has produced many Armenian opera premiers in UK. He has served the Armenian church in different capacities including cantor, organist and choir master. In 2017 he was awarded the Komitas Medal by the Armenian Government in recognition of his contribution to the cultural life of Diaspora.

We look forward welcoming everyone to our choir.
Your presence will expand and enrich our choir.
For further details, please contact: services@styeghiche.org.uk

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Lusin Moskofian, Mr Simon, Vartan and Krikor Moskofian and families for the soul of their Husband, who was also a loving Father, Grandfather and Great-grandfather the late **DIKRAN MOSKOFIAN** on the 40th day memorial of his passing, also for all the old and new deceased members of the **MOSKOFIAN** Family.

By Zoe Yessaian and Family for the soul of their Father the late **VAHE YESSAIAN**, on the 1st anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **YESSAIAN** Family.

By Arakelian Family for the soul of their Husband, who was also a loving Father and Grandfather the late **MESROP ARAKELIAN** on the 17th anniversary of his passing, also for Uncles **SEROP**, **ARAM** & **ANTRANIG** and Aunt **SOSE ARAKELIAN**, and for all the old and new deceased members of the **ARAKELIAN** & **MELIKIAN** families.

By Melkumyan and Harutyunyan Families for the soul of their Son-in-law who was also a loving Brother-in-law the late **HOVSEP MARGARIAN** on the 10 day memorial of his passing, also for all the old and new deceased members of the **MARGARIAN**, **MELKUMYAN** and **HARUTYUNYAN** Families.

By Gohar Harutyunyan for the soul of her Father the late **MANVEL HARUTYUNYAN** on the 20th anniversary memorial of his passing, also for all he old and new deceased members of the **MELKUMYAN** and **HARUTYUNYAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donation is gratefully accepted*:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

You may send in your donations as follows:

- By post to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.
- By bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F
- By using our QR Code to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions.

Thank you. **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal

Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation.
Forms are available from Parish Council.